ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Տնօրեն՝ Ս. ԴԵՂՈՅԱՆ 31 օգոստոս 2022թ.
Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի
համար 179 հիմնական դպրոց
II Բ դասարան

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՒՍԱՆ ՄԿՐՏՉԻ

2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)*

1-ին դասարանն ավարտել 2-րդ դասարան են փոխադրվել 30 աշակերտներ, որոնցից 12 տղաներ, 18՝ աղջիկներ: Երկու աշակերտ տեղափոխվել են այլ դպրոց, դասարանում աշակերտների թիվը դարձել է 28, որոնցից 11-ը տղա,17-ը՝ աղջիկ: Աշակերտները համախմբված են, տրիում է առողջ, ընկերական մթնոլորտ: Բոլորը գտնվում են ուշադրության կենտրոնում:_ՈՒնենք լեզվական խնդիրներով աշակերտներ, որոնց հետ աշխատում է լոգոպետը: Կան նաև անբարենպաստ ընտանիքների աշակերտներ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կնպաստենք մատաղ սերնդի, անհատի համակողմանի, ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանը: Կարևորագույն խնդիրներից են աշակերտների առաջադիմությունը և պատշաճ վարքագիծ ունենալու հարցերը: Կկազմակերպվի ուսուցման չափորոշիչային համակարգ ըստ ուսումնական պլանի: Կհիմնավորվի աշակերտների պարտականություններն ու իրավունքները:

Կձևավորվի կարծիքների փոխանակման, միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի կուլտուրա:

Կդաստիարակենք սեր դեպի հայրենիքը, բնությունը, հարգանք մեծերի և աշխատանքնի նկատմամբ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշխատանքներ կտարվի հայ ժողովրդի հոգևոր արժեքներին ծանոթացնելու ուղղությամբ:

Կպահպանենք լեզվի մաքրության պատշաճ կանոնները:

Կայցելենք թանգարաններ, թատրոն, մանկական պատկերասրահ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Սեր արթնացնել գեղեցիկի նկատմամբ, ապահովել ազգային արժեքների գնահատման աշխատանքները: Ազգային և համապետական տոնակատարությունների մասնակցություն և ցերեկույթների կազմակերպում:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Կձևավորվի առողջ և հայրենասեր սերունդ: Կբարձրացվի հայոց բանակի դերը, կծանոթանան քաջ հայորդիներին, նրանց կատարած սխրանքներին՝ որն էլ կբարձրացնի ապագա զինվորի ձևավորման գործընթացը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Առաջնորդվել «Առողջ մարմնում, առողջ հոգի» նշանաբանով: Կբարձրացվի նրանց ֆիզիկական ակտիվությունը: Ուշադրության կենտրոնում պահել օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի ճիշտ կատարման հարցերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ցանակացած աշխատանք արժանի է հարգանքի նշանաբանով: Հարգել կատարված աշխատանքը: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ սովորեցնել աշխատանքնային կանոնները:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Կանցկացվեն զրույցներ բնության նկատմամբ սեր արթնացնելու մասին:

Շրջապատի, շրջակա միջավայրի մաքրությունն ու պահպանությունը անհրաժեշտ է յուրաքանչյուր անհատի համար:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կստեղծվի դպրոց-ընտանիք ամուր կապը, որն էլ կնպաստի աշակերտների համակողմանի դաստիարակությանը: Ծնող-ուսուցիչ հաատող ուժերով կկարողանանք հաղթահարել ստեղծված դժվարությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1-ին շաբաթ	Հանդիսավոր ընդունել աշակերտներին: Սեպտեմբերի 1-ը որպես գիտելիքի օր: Անցկացնել ծնողական ժողով, քննարկել կազմակերպչական հարցեր:	1-9 սեպտեմբեր	Փոխտնօրեն դասվար
2-րդ շաբաթ	Երկրորդ դասարանում ճիշտ կազմակերպել օրվա ռեժիմը, քննարկել նրա ահրաժեշտությունը:	16 սեպտեմբեր	դասվար
3-րդ շաբաթ	ՀՀ անկախության տոնին նվիրված զրույց «Մենք 31 տարեկան ենք»:	23 սեպտեմբեր	դասվար
4-րդ շաբաթ	«Շրջակա միջավայրի մաքրությունը և մարդու առողջությունը» թեմայով զրույց:	30 Սեպտեմբեր	դասվար
5-րդ շաբաթ	Հեքիաթի ունկենդրում, որի միջոցով վեր կհանվի լավի ու բարու, ազնվության և ընկերասիրության զգացումը:	7 հոկետմբեր	դասվար
6-րդ շաբաթ	«Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի» ասացվածքի միջոցով աշակերտներին հասանելի դարձնել համերաշխության կարևորությունը:	14 հոկտեմբեր	դասվար
7-րդ շաբաթ	Կազմակերպել «Աշունը մեր բակում» նկարների ցուցադրություն:	21 հոկտեմբեր	Դասվար Ավջյան
8-րդ շաբաթ	Ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը բակում և փողոցում:	4 նոյեմբեր	դասվար
9-րդ շաբաթ	Հեքիաթի ընթերցում և քննարկում «Ինչպես Կոկոն դարձավ թիմի անդամ»:	11 Նոյեմբեր	դասվար
10-րդ շաբաթ	Զրույց «Վարքի կանոնները և վարվեցողության կուլտուրան» թեմայով:	18 նոյեմբեր	դասվար
11-րդ շաբաթ	Էքսկուրսիա մոտակա պուրակ «Աշնան գույները» թեմայով զրույց:	25 նոյեմբեր	դասվար

12-րդ շաբաթ	«Ինչպես հագնվել ձմռան նախաշեմին »թեմայով զրույց:	2 դեկտեմբեր	դասվար
13-րդ շաբաթ	«Գրիպի վտանգները և մարդու առողջությունը» թեմայով զրույց:	9 դեկտեմբեր	դասվար
14-րդ շաբաթ	«Մեր բակի պատմությունը » պատմվածքի քննարկումը:	16 դեկտեմբեր	դասվար
15-րդ շաբաթ	Ամանորյա ցերեկույթ:	23 դեկտեմբեր	դասվար
16-րդ շաբաթ	Զրույց նվիրված Հայոց բանակի օրվան:	27 հունվար	դասվար
17-րդ շաբաթ	Ծնողական ժողով, 1-ին կիսամյակի ամփոփում:	3 փետրվար	դասվար
18-րդ շաբաթ	Փողոցային երթևեկության կանոնների ամրապնդում:	10 փետրվար	դասվար
19-րդ շաբաթ	Ինչպես պաշտպանվել բնական աղետներից (երկրաշարժ, հրդեհ):	17 փետրվար	դասվար
20-րդ շաբաթ	Անաղարտ մայրենի, հզոր հայրենիք: Գիրք նվիրելու ավանդույթի պահպանում:	21 փետրվար	դասվար
21-րդ շաբաթ	Խաչմերուկները և դրանց տեսակները: Տրանսպորտային միջոցների ազդանշանները:	3 մարտ	դասվար
22-րդ շաբաթ	Պատրաստել բացիկ Մարտի 8-ի տոնի առթիվ:	7 մարտ	դասվար
23-րդ շաբաթ	Մաքուր պահենք մեր բակը, փողոցը, քաղաքը:	17 մարտ	դասվար
24-րդ շաբաթ	Զրույց «Դպրոցականի վարքի կանոնները դպրոցում» թեմայով:	24 մարտ	դասվար
25-րդ շաբաթ	Ստուգել դասագրքերը և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգել:	7 ապրիլ	դասվար

26-րդ շաբաթ	Զրույց «Հանդուրժողականությունը» թեմայով: Քննարկել «Ո՞վ է մեղավոր» պատմվածքը:	14 ապրիլ	դասվար
27-րդ շաբաթ	«Հայոց ցեղասպանությունը և նրա հետևանքները» թեմայով զրույց:	21 ապրիլ	դասվար
28-րդ շաբաթ	Տրանսպորտային միջոցներից իջնելիս փողոցն անցնելու կանոնները:	28 ապրիլ	դասվար
29-րդ շաբաթ	Զրույց «Աշխատանքը և նրա ստեղծած բարիքները» թեմայով:	5 մայիս	Դասվար
30-րդ շաբաթ	Զրույց «Մայիսյան հաղթանկները հայ ժողովրդի կյանքում» թեմայով:	12 մայիս	դասվար
31-րդ շաբաթ	Ինչպես պաշտպանել մեր շրջապատի թռչուններին:	19 մայիս	դասվար
32-րդ շաբաթ	Գրքերի նախապատրաստումն ու հանձնումը գրադարանին:	23 մայիս	դասվար